ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-2/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 04.04.2022թ.
ժամը 90^{50}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ վարչության պետ, գնդապետ՝ Կ. Գրիգորյան (ԳԱՊ),
Գնահատող՝
ՀՀ ԶՈՒ ՊԳՎ ՈՒՆՏ ապահովման բաժնի պետ, գնդապետ Գ. Մխիթարյան,
Բացակայում է՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱՎ ապահովման 1-ին բաժնի ավագ մասնագետ Դ. Մաթևոսյանը:
Գնումները համակարգող՝
ՀՀ ՊՆ ԳԿ վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Ս. Ներսիսյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-2/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ս. Ներսիսյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-2/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին, համապատասխան կազմած լինելու մասին.
3. Մասնակիցների առաջարկած գները և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4.Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-2/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ս. Ներսիսյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար ապրանքների մատակարարման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-2/3» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում
1	«Դիջի պրինտ» ՍՊԸ
2	«ՄՈՏՈԲԼՈԿ» ՍՊԸ
3	«Հարություն Գևորգյան Ռազմիկի» ԱՁ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

2 .«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-2/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ս. Ներսիսյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 «Դիջի պրինտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-2/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող իր կողմից հաստատված իրական շահառուների մասին տվյալները՝ հավելված 1.3-ը:
2.4 «ՄՈՏՈԲԼՈԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.1-ում առաջարկվող ապրանքի նկարագրության մեջ կցասայլակի նկարագրությունը ներկայացվել է առանց ինքաթափի,այն ինչ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-2/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված է կցասայլակը՝ ինքնաթափ:

Հաշվի առնելով վերը նշված անհամապատասխանությունները և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝

գնահատող հանձնաժողովը 04.04.2022թ. որոշեց կասեցնել նիստը ու առաջարկել «Դիջի պրինտ» ՍՊԸ-ին և «ՄՈՏՈԲԼՈԿ» ՍՊԸ-ին, մեկ աշխատանքային օրվա ընթացքում, շտկել անհամապատասխանությունները:

07.04.2022թ. շարունակելով նիստը՝ գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ Մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրել են պահանջվող շտկումները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-2/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2 դեմ՝ 0:

3. Մասնակիցների առաջարկած գները և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Ս. Ներսիսյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-2/3» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել 3 մասնակիցներ.

ՀՀ	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակը	Մեկ միավորի գինը (դրամ)	Նախահաշվ. գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների			
						անվանումները	գնային առաջարկները		
							առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը
1	տրանսֆորմատոր հոսանքի (Սնուցման աղբյուրների փոխակերպիչներ (տրանսֆորմատոր 2,5ԿՎԱ))	հատ	5	41000	205000	«Հարություն Գևորգյան Ռազմիկի» ԱՁ	205,000	0	205,000
2	էներգիայի կերպափոխիչներ (Գեներատոր բենզինային)	հատ	5	370000	1850000	Հայտ չի ներկայացվել			
3	հետիոտն մեքենավարի կողմից կառավարվող գյուղատնտեսական տրակտորներ (Մոտոբլոկ)	հատ	13	1400000	18200000	«ՄՈՏՈԲԼՈԿ» ՍՊԸ	17,940,000	0	17,940,000
4	միացուցիչներ և կոնտակտային տարրեր (էլեկտրական հանգույց մեծ))	հատ	300	1560	468000	Հայտ չի ներկայացվել			
5	միացուցիչներ և կոնտակտային տարրեր (էլեկտրական հանգույց փոքր))	հատ		1120	0	Հայտ չի ներկայացվել			
6	բաշխիչ բլոկեր (բաշխման տուփ(ՇՄ-68))	հատ	300	1560	468000	«Հարություն Գևորգյան Ռազմիկի» ԱՁ	468,000	0	468,000
7	բաժանարար տուփ (բաժանարար տուփ (ԿՇԿ))	հատ	150	1650	247500	«Հարություն Գևորգյան Ռազմիկի» ԱՁ	247,500	0	247,500
8	բարձրախոսներ (Բարձրախոս)	հատ	5	16000	80000	«Հարություն Գևորգյան Ռազմիկի» ԱՁ	80,000	0	80,000
9	Լուսամփոփներ (Փակ Լուսամփոփ) Լուսամփոփներ (Փակ Լուսամփոփ)	հատ	100	2400	240000	«Հարություն Գևորգյան Ռազմիկի» ԱՁ	240,000	0	240,000
10	կոմուտացիոն սարք (Կոմուտացիոն սարք)	հատ	600	8000	4800000	«Հարություն Գևորգյան Ռազմիկի» ԱՁ	4,776,000	0	4,776,000
11	գովազդային նյութեր (Ցուցապաստառներ)	մ2	7000	1270	8890000	«Դիջի պրինտ» ՍՊԸ	11,200,000	0	11,200,000

3.2 Մասնակցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-2/3» ծածկագրով ընթացակարգի 1-ին. 3-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ չափաբաժիններին հայտ է ներկայացրել մեկ մասնակից, և 11-րդ չափաբաժնի մասով առաջարկված գինը գերազանցում է պլանավորված նախահաշվային գինը, գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, որոշեց նիստը կասեցնել և գների նվազեցման նպատակով 12.04.2022թ. ժամը 11:30-ին ՀՀ ՊՆ ԳԿ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել միաժամանակյա բանակցություններ բոլոր մասնակիցների հետ:

Նախատեսված բանակցություններին «Հարություն Գևորգյան Ռազմիկի» Ա/Ձ-ն և «Դիջի պրինտ» ՍՊԸ-ն չներկայացան, արդյունքում վերջիններիս կողմից առաջարկված գները մնացին անփոփոխ, **իսկ** «ՄՈՏՈԲԼՈԿ» ՍՊԸ-ն ներկայացավ և իջեցրեց 3-րդ չափաբաժնի գինը՝ առաջարկելով 17 550 000 ՀՀ դրամ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-2/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ս. Ներսիսյան)

4.1 Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը՝ 12.04.2022թ. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-2/3» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում՝ 1-ին, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ, չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչվեց «Հարություն Գևորգյան Ռազմիկի» Ա/Ձ-ն –ն, իսկ 3-րդ չափաբաժնի մասով՝ «ՄՈՏՈԲԼՈԿ» ՍՊԸ-ն:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22--2/3» ծածկագրով ընթացակարգի 2-րդ, 4-րդ, և 5-րդ չափաբաժինների մասով գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը հայտարարել չկայացած ՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (ոչ մի հայտ չի ներկայացվել), 11-րդ չափաբաժինը ևս հայտարարվեց չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պահանջներին):

4.2 Հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-2/3» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն: Սույն ընթացակարգի մասով սահմանվում է հինգօրյա անգործության ժամկետ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Ս. Ներսիսյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-2/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Կ. Գրիգորյան

Գնահատող Գ. Մխիթարյան

Գնումները համակարգող՝ Ս. Ներսիսյան